ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 1-32/26-IS/INSTLING

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան 29 դեկտեմբերի 2025թ.

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեն (այսուհետ՝ Կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն (ռեկտոր) Վիկտոր Լիպարիտի Կատվալյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 156-Ն որոշման Հավելված N 1-ով հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ձևով պետական ֆինանսավորման կարգը» (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Կոմիտեն պարտավորվում է Ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջեով նախատեսված 180 448 700 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, իրականացվելիք գիտական հետազոտությունների (այսուհետ՝ Միջոցառումներ) ակնկալվող գիտական արդյունքները, Ծրագրի նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Կոմիտեն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Կոմիտեի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,
2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,
2.2.3 Կոմիտեի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Կոմիտեն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,
2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,
2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Կոմիտե հանձնել սահմանված ժամկետում,
2.4.3 Պայմանագրի նախահաշիվը կազմել առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2025 թվականի դեկտեմբերի 22-ի N 2856-Ա/2 հրամանով ձևավորված միջգերատեսչական հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 24-ի նիստի արձանագրությամբ,
2.4.4 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,
2.4.5 կատարել Կոմիտեի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,
2.4.6 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու ոչ նպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Կոմիտե,
2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Կոմիտե ներկայացնել հիմնավորում,
2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Կոմիտեի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,
2.4.9 Ծրագրի ավարտից հետո Կոմիտե ներկայացնել Միջոցառումների իրականացման մասին տարեկան (ամփոփիչ) հաշվետվություն,
2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Կոմիտեի հնարավորությունը,
2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,
2.4.12 Պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2027 թվականի հունվարի 24-ը:

3. Պայմանագրի գինը

Պայմանագրի գինը կազմում է 180 448 700 ՀՀ դրամ:

4. Մշտադիտարկում

4.1 Կոմիտեն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կոմիտեն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Կոմիտե ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Կոմիտե	Կազմակերպություն
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե	ՀՀ ԳԱԱ «Հ.Աճառյանի անվ. լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ
ք. Երևան, Օրբելի եղբայրների 22 Հ/հ՝ 900011033033 ՀՎՀՀ՝ 02704199 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան	Երևան, Կենտրոն, Գր.Լուսավորիչի փողոց 15 Հ/հ՝ 900018005489 ՀՎՀՀ՝ 01505307 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ _____ (ստորագրություն) Կ. Տ. Կարեն Բորիսի Ղարիբյան	Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Կ. Տ. Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (ստորագրություն) Կատվալյան Վիկտոր Լիպարիտի

Հավելված N 1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-32/26-IS/INSTLING պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, Կոմիտեի գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Կարեն Բորիսի Ղարիբյանը և Կազմակերպության տնօրեն (ռեկտոր) Վիկտոր Լիպարիտի Կատվալյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 դեկտեմբերի 2025թ. N 1-32/26-IS/INSTLING պայմանագրի գնի վերաբերյալ՝ 180 448 700 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

Կոմիտե	**Կազմակերպություն**
Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝	տնօրեն (ռեկտոր)՝
_____ (ստորագրություն) Կ. S.	_____ (ստորագրություն) Կ. S.
Կարեն Բորիսի Ղարիբյան	Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Հավելված N 2
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-32/26-IS/INSTLING պայմանագրի

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

Ակնկալվող արդյունք	Քանակ
ՄԳՇ-ում (Միջազգային գիտատեղեկատվական շտեմարան) հրապարակում՝	20
Այլ պարբերականում հրապարակում՝	50
Գրքեր, մենագրություններ՝	15
Գիտաժողովի նյութեր՝	4

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Կազմակերպության գիտքարտուղար՝ _____ (ստորագրություն) Մխիթարյան Գայանե Մելիսի

Կ. Տ.

Հավելված N 3
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-32/26-IS/INSTLING պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

ՀՀ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝(ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)	178 136 700	35 627 340	44 534 175	44 534 175	53 441 010
2.	տնտեսական ծախսեր՝	1 380 000	276 000	345 000	345 000	414 000
3.	այլ ծախսեր՝	932 000	186 400	233 000	233 000	279 600
Ընդամենը՝		180 448 700	36 089 740	45 112 175	45 112 175	54 134 610

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվալյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարդգեսի Սոլակյան

Կ. Տ.

Հավելված N 3.1
29 դեկտեմբերի 2025թ.
N 1-32/26-IS/INSTLING պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

՝՝ դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	**1 380 000**
1.	*էլեկտրաէներգիայի ծառայություն*	1 000 000
2.	*գազի ծառայություն*	0
3.	*ջրամատակարարման ծառայություն*	120 000
4.	*կապի ծառայություն*	200 000
5.	*աղբահանություն*	0
6.	դեռատիզացիա	60 000
	Այլ ծախսեր, այդ թվում՝	**932 000**
1.	Հրատարակման ծախս	400 000
2.	Այլ ծախսեր	532 000

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (ստորագրություն) Վիկտոր Լիպարիտի Կատվայան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն) Սոնա Վարդգեսի Սոլակյան

Կ. Տ.

Հավելված N 5
«29» դեկտեմբերի 2025 թ.
N **1-32/26-IS/INSTLING** պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2026 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը (1 պարբերություն):

Աշխատանքի հիմնական նպատակներն են՝ ա) հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, բ) ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտությունների ծավալումը, գ) լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրների առաջքաշումն ու դրանց լուծմանը նպաստելը:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մինչև 1 էջ):

Գիտական հետազոտություններն իրականացնել տեսական, փորձառական եղանակներով, համեմատական, վերլուծական, պատմահամեմատական, պատմական-նկարագրական, կառուցվածքային-նկարագրական, լեզվավիճակագրական, լեզվաաշխարհագրական և այլ մեթոդներով: Առանձին իրողություններ քննել լեզվաբանական աշխարհագրության, համեմատական և պատմական մեթոդներով, զուգաբանական-վիճակագրական և բառավիճակագրական սկզբունքների կիրառմամբ:
Գիտահետազոտական աշխատանքները կատարել լեզվական նյութի համակողմանի քննությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, գիտական պատշաճ մակարդակով կատարված արժեքավոր հետազոտություններով համալրել հայերենագիտության տարբեր ոլորտները: Գիտական արդյունքները ներկայացնել զեկուցումներում և գիտական հրապարակումներում:

4. Աշխատանքի բովանդակությունը (մինչև 3 էջ):

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կատարվող գիտական հետազոտությունները ընդհանուր առմամբ ունեն հիմնարար բնույթ և կիրառելի են հայերենագիտության ու հայագիտության ոլորտներում: Ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկան ընդգրկում է չորս գիտական ուղղություններ՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր:
«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» ուղղության շրջանակում հետազոտություններ են ընթանում հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառներում՝ ընդգրկելով քերականական ու բառապաշարային համակարգերին վերաբերող արդիական և դեռևս ամբողջովին չլուսաբանված թեմաներ, որոնք միտված են իրողությունների նորովի մեկնաբանությանը, վերլուծությանն ու նկարագրությանը, հայ լեզվաբանական մտքի հետագա զարգացմանը: Այս ուղղությամբ նախատեսվում է կատարել արդի հայերենի քերականության, բառապաշարի մի շարք իրողությունների, տեքստի լեզվաբանության ու շարահյուսության տարաբնույթ հարցերի դիտարկում, գրական հայերենի կառուցվածքի և գործառության, կանոնարկման խնդիրների

քննություն, տարբեր բնագավառների տերմինահամակարգերի ուսումնասիրություն, գրական լեզվի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի փոխհարաբերությունների դիտարկում, կկազմվեն նորաբանությունների բառարաններ, տարբեր ոլորտների տերմինարաններ:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ուղղության շրջանակում հետազոտություններ են ընթանում լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխությունների ու դրանց օրինաչափությունների վերհանման ու վերլուծության, հայերենի և այլ լեզուների բառապաշարային աղերսների քննության ուղղությամբ: Այդ առումով արդիական են Աստվածաշնչի ազդեցության քննությունը հայ լեզվամշակույթի վրա, բառաքննական դիտարկումներն ու ստուգաբանությունները, միջինհայերենյան հանելուկների և առակների լեզվական առանձնահատկությունները, մասնագիտական բառապաշարի պատմական ուսումնասիրությունը: Կարևորվում են ձեռագիր բառարանների բառապաշարի հետազոտությունը, ձեռագիր քերականությունների քննությունը: Հայոց լեզվի պատմական զարգացման առանձին հարցերի ուսումնասիրությունները կարող են նյութ տրամադրել նախատեսվող այնպիսի ընդգրկուն աշխատությունների համար, ինչպիսիք են գրաբարի ակադեմիական քերականությունը, միջին հայերենի ամբողջական քերականությունը, հայոց լեզվի պատմական քերականությունը, պատմական բարբառագիտությունը, պատմական ու համեմատական բառագիտությունը, ստուգաբանական ու այլ կարգի բառարանները և այլն:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» ուղղության շրջանակում արդիական են տեսական բարբառագիտական խնդիրների արծարծումը, բարբառային ոճաբանության, բարբառների բառապաշարի ու քերականական համակարգերի քննությունը, Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության պատմությունը, բարբառային միավորների պատմական ու համեմատական ուսումնասիրությունը, դեռևս չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտությունը: Կարևոր նշանակություն ունեն բարբառային նյութերի հավաքման ու թվայնացման, ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերի համալրման և թվայնացման աշխատանքները: Կատարվող հետազոտությունները նպաստում են բարբառային հայերենի վերաբերյալ եղած պատկերացումների ամբողջացմանը, համալրում են բարբառային հայերենի ակադեմիական քերականության պատրաստման համար անհրաժեշտ նյութերը: Հետազոտությունների արդյունքները կնպաստեն լեզվի պատմության, բանագիտության ու ազգագրության տարբեր խնդիրների պարզաբանմանը:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» ուղղության շրջանակում ընդհանուր լեզվաբանական հայեցակետով կատարվում են հայերենի և թոխարական լեզուների, հայերենի և ալբանական լեզուների, հայերենի և տարածաշրջանի լեզուների համեմատական և տիպաբանական ուսումնասիրություններ, ապառնիության քերականական արտահայտության հետազոտություն հայերենի պատմական զարգացման ընթացքում, հայերենի և արաբերենի տիպաբանական ընդհանրությունների և տարբերությունների քննություն ձևաբանության մակարդակում, արհեստական բանականության ալգորիթմներում լեզվական կորպուսի ստեղծման նորարարական մոտեցումների ուսումնասիրություն՝ արհեստական բանականության հնարավորությունների գործածությամբ, հակադրության՝ որպես իմաստակերտիչ երևույթի հետազոտություն ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից: Կատարվող աշխատանքները նպաստում են հայ իրականության մեջ ընդհանուր և համեմատական լեզվաբանական ուղղությունների հետագա զարգացմանը, հայերենին վերաբերող լրացուցիչ նյութ են տրամադրում այդ ուղղություններով զբաղվող օտար ուսումնասիրողներին:

Կիրառական լեզվաբանության ուղղությամբ իրականացվում են փորձառական հնչյունաբանական հետազոտություններ, նյարդալեզվաբանության, հոգելեզվաբանության հիմնախնդիրների և զարգացման հեռանկարների ուսումնասիրություն, քննվում են լեզվական ցուցիչների դերը ընկճախտի և տագնապային խանգարումների ախտորոշման և հաղթահարման գործում:

Ծրագրի շրջանակում գիտական հետազոտություններն իրականացվում են տեսական, փորձառական եղանակներով, համեմատական, վերլուծական, պատմահամեմատական,

պատմական-նկարագրական, կառուցվածքային-նկարագրական մեթոդներով: Առանձին իրողություններ քննվում են լեզվաբանական աշխարհագրության, համեմատական և պատմական մեթոդներով, զուգաբանական-վիճակագրական և բառավիճակագրական սկզբունքների կիրառմամբ:

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական ուղղությունների շրջանակներում 2026թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդի արևելահայերենի ուսումնասիրության ուղղությամբ 2026 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Լեզվի հարցերը 19-րդ դարի առաջին կեսի հայ պարբերական մամուլում,
- Հատկական փոխառությունները հայ դասական գրողների գործերում,
-Շարահյուսական նորմը բարդ նախադասությունների համակարգում,
- Շարահյուսական կապակցությունների դրսևորումները արդի գեղարվեստական խոսքում,
- Երգիծանքի լեզվաոճական միջոցները Գրիգոր Թորոսյանի արձակում,
-«Խաղ», «պար» հասկացություններ նշող բառանվանումների քննություն հայերենում,
- Բառակազմության տեսական հարցերի քննությունը Գևորգ Ջահուկյանի աշխատություններում,
- Բառագործածության նորմավորման խնդիրներ,
- Բայական զուգաձևությունները ժամանակակից հայերենում / 21-րդ դար/,
- Արցախի տեղանունների վերանվանումներ՝ որպես քաղաքական գործիքի վերլուծություն,
- Կիսապատճենված նորակազմ տերմինային կապակցությունները մամուլում,
- Իմաստային տեղաշարժերը ռազմական ոլորտի բառապաշարում,
- Ոսկերչական իրերի անվանումների հետազոտում և դասակարգում:

Արդի արևմտահայերենի ուսումնասիրության բնագավառում 2026թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

-Բառակազմական պատճառաբանվածությունը արևմտահայերենում (թեմայի ամփոփում),
-Արևմտահայերենի հիմքակազմությունը,
- Արեւմտահայերէնի արդի վիճակը Պոլսո մէջ (Արեւմտահայերէնը 20-րդ դարու սկիզբ),
- Արևմտահայերեն-արևելահայերեն համեմատական քերականություն (բայի խնդրառություն):

Շարունակվելու են աշխատանքները «Նորաբանություններ արևմտահայերէնի մէջ» բառարանի հերթական պրակի կազմման ուղղությամբ:

Բ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ծրագրի ուղղությամբ 2026թ. կատարվելու են հետևյալ թեմաները՝

- Բառաքննական, ստուգաբանական դիտարկումներ,
-Նորակազմությունների բառարան (ըստ ԺԳ-ԺԸ դարերի ձեռագիր բառարանների). բառարանի կազմության սկզբունքների մշակում,
- Աստվածաշնչյան դարձվածքների քննություն այլալեզու բնագրերի համեմատությամբ /շարունակելի/,
- Օտար բառերի գործածությունը 16-րդ դարի երկերում,
- Գ. Տաթևացու «Մեկնութիւն Հոբի» «Մեկնութիւն Յովհաննու Ավետարանի» երկերի լեզվաոճական առանձնահատկությունների քննություն,

-«Քերականություն է Ը մասանց բանի» ձեռագիր երկի քննություն (ԺԷ դ.),
- Վ. Այգեկցու առակների լեզվական առանձնահատկությունների քննություն:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ 2026թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

-Բարբառային ոճաբանություն (բառապաշար),
- Բնության երևույթ նշող հասկացությունների անվանումները հայերենի արևելյան խմբակցության բարբառներում,
- Կոզենի բարբառի քերականական առանձնահատկությունները,
- Մշո և Սասնո բարբառների բառապաշարի քննություն,
- Նախիջևանի բարբառային համապատկերը,
- Սեբաստայի բարբառի Զարա, Մանջալիկ, Դինդիլ խոսվածքների լեզվական առնչությունների զուգադրական քննություն,
- Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի պատմահամեմատական քննություն/շարունակելի/,
- Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությունը (Հետխորհրդային շրջան):

Շարունակվելու են հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի թվայնացման աշխատանքները (Քերականական զուգաբանությունների թվայնացում և ներածում):

Դ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ընդհանուր և համեմատական լեզվաբանության ուղղությամբ 2026թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Հայերենի և թոխարական լեզուների արմատի կառուցվածքի և քերականական իրողությունների քննություն,
- Հայերենը և ալբաներենը (թեմայի շարադրանք),
- Լեզվական կորպուսի ստեղծման նորարարական մոտեցումներ. (ԱԲ) հնարավորությունները,
- Ապառնիության արտահայտությունը հայերենի արևմտյան խմբակցության բարբառներում արդի լեզվաբանության դիտանկյունից,
- Երկնոլորտին առնչվող տերմինների ստուգաբանություն և ստուգաբանության պատմություն,
- Հայերենի և արաբերենի տիպաբանական ընդհան-րություններ և տարբերու-թյուններ (ձևաբանության մակարդակ),
- Հակադրության ըմբռնումը լեզվաբանության մեջ ճանա-չողական լեզվաբանության դիտանկյունից:

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____)
(ստորագրություն) *(անուն ազգանուն)*

Հավելված N 6
«29» դեկտեմբերի 2025 թ.
N **1-32/26-IS/INSTLING** պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ *

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի
(ծրագրի անվանումը)

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	հունվար-մարտ
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	
3	Հայ բարբառների ուսումնասիրություն			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		Նյութերի մշակում, քննարկում, պլանավորում	
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	կիսամյակի վերջ
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	
3	Հայ բարբառների ուսումնասիրություն		Նյութերի մշակում, համակարգում քննարկում	
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		Շարադրանք	

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով:*

1 2 3 4	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր Հայ բարբառների ուսումնասիրություն Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում քննարկում Շարադրանք	հոկտեմբեր
1 2 3 4	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր Հայ բարբառների ուսումնասիրություն Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում քննարկում Շարադրանք	տարեվերջ

Կազմակերպության տնօրեն (ռեկտոր)՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (_____)
(ստորագրություն) (անուն ազգանուն)